ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՄԱՐԶԸ	ԼՈՌԻ
ՀԱՄԱՅՆՔԸ	ԼՈՌԻ ԲԵՐԴ
ԲՆԱԿԱՎԱՅՐԸ	ՈՒԴՈՒՏ

1.ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Ուռուտ գյուղը գտնվում է Լոռու մարզում,Ստեփանավանի տարածաշրջանում, Լալվար լեռան ստորոտին՝ <<Մեծ քար >> կոչվող սարի լանջին, 2 կմ երկարությամբ ձգվող Ուռուտ գետի հովտում: Ըստ ավանդույթի գետափը պատված է եղել ուռենիներով, որի պատճառով գետը և գյուղը անվանվել է Ուռուտ:Գյուղի արևելյան մասում է գտնվում Սուրբ Սարգիս եկեղեցին (5-րդ դար),որը վերանորոգվել է 2019թ.Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպս Չուլջյանի նախաձեռնությամբ իսկ հարավ- արևմտյան մասում ՝ Սուրբ Ամենափրկիչ մատուռը (13-րդ դար): Գյուղի կենտրոնական մասում , այգու մեջ տեղադրված է հուշակոթող՝ նվիրված Մեծ Հայրենականում զոհվածների հիշատակին:

2.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրը՝ հիմնադրված 19-րդ դարի սկզբին, սփռված է Ուռուտ գետի ափին՝ 1450 մ բարձրության վրա: Գյուղի անունը ստացել է հենց գետի շուրջ աճած առատ ուռենիներից, որոնք մինչև այսօր գյուղին հաղորդում են յուրահատուկ կանաչ երանգ և մաքուր բնության շունչ: Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրը գտնվում է Ուռուտ գետի ափին, բնակավայրի հեռավորությունը մարզկենտրոնից 43կմ է: Վերջին տարիներին Ուռուտում իրականացվել են մի շարք բարեփոխումներ՝ ուղղված ենթակառուցվածքների բարելավմանը, համայնքային կյանքի աշխուժացմանը և գյուղատնտեսության զարգացմանը: Գյուղում կառուցվել են նոր ճանապարհներ, բարելավվել է ջրամատակարարման համակարգը, ինչպես նաև ստեղծվել են նոր աշխատատեղեր: Ուռուտ գյուղը, իր գեղատեսիլ բնությամբ, հարմար դիրքով և ավանդական գյուղական կենցաղով, ունի տուրիզմի՝ հատկապես էկո- և ագրոտուրիզմի մեծ ներուժ:Ուռուտ գետի, անտառապատ լանջերը և մաքուր լեռնային օդը հրաշալի պայմաններ են ստեղծում բնության սիրահարների, հեքիաթային արշավների ու հանգստի համար:Այցելուները կարող են մասնակցել հողագործական աշխատանքներին, գյուղական կենցաղի տարբեր ընթացքներին՝ կթել կով, հաց թխել, մեղվաբուծություն ուսումնասիրել: Համագործակցելով համայնքի և զբոսաշրջային կազմակերպությունների հետ՝ Ուռուտը կարող է դառնալ էկոտուրիզմի ակտիվ ուղղություն Լոռու մարզում՝ միավորելով գյուղի բնությունը, աշխատասիրությունը և հյուրընկալ մթնոլորտը:

3.ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Կլիման ձմռանը մեղմ է, ամռանը՝ զով: Տեղումները հաճախակի բնույթ չեն կրում: Վերջին տարիներին գարնանային ցրտահարություններ են լինում ,ամռանը՝ կարկտահարություն, երաշտ:

4.ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Ստեփանավան

2. Բնակավայրի հեռավորությունը՝	
2.1) համայնքի կենտրոնից (կմ)	10
2.2) մայրաքաղաքից (կմ)	147
2.3) մարզկենտրոնից (կմ)	45
2.4) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	22
2.5) նախկին շրջկենտրոնից (կմ)	7
2.6) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	7
2.6) մոտակա երկաթուղային կայարանից (կմ)	45
4. Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1450
5. Բնակավայրի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	28,26/2825,96
6. Սահմանակից համայնքների և/կամ բնակավայրերի անվանումները	Սվերդլով, Բովաձոր,Սարատովկա, Ստեփանավան,Լեջան
7. Բնակավայրի վարչական ղեկավարի հեռախոսահամարը	091-210662
8. Բնակավայրում փոստային բաժանմունքի առկայությունը(այո, ոչ), քանակը	Այո/1
9.Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	այո
10. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	ոչ

5.ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ

	2025թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	777
2. Գրանցված ծնունդների քանակը	9
2.Մահացության դեպքերի քանակը	11
3.Ամուսնությունների քանակը	3
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	272
6 Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների թիվը	42
7. Կենսաթոշակառուների քանակը	138
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	45

6.ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	01.01.2025թ.

1. Գրադարանների քանակը	0
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	0
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

7.ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ

	01.01.2025թ.
1. Բնակավայրի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ^2)	24521
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	1
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	287

8.ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	01.01.2025թ.
1. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	2394.05
2. Բնակավայրերի հողեր (հա)	118,78
3. Արդյունաբերական, ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	37,4
4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտներ	6.96
5. Հատուկ նշանակության	100,86
6. Հատուկ պահպանվող տարածքների	6.14
7. Անտառային	150,86
8. Ջրային	10,91
9.Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	1139
10. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	458
11. Խոզերի գլուխաքանակը	185
12. Գյուղատնտեսական տեխնիկա	54
12.1 տրակտորներ (քանակը)	49
12.2 կոմբայններ (քանակը)	0

13. Գյուղացիական տնտեսությունների թիվը	280

9.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	3
2. Բնակավայրի գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Բնակավայրի աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Բնակավայրում գերեզմանատան առկայությունը (այո, ոչ)	այո
5. Ներբնակավայրային ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	15,1
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	0
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	13
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուրավոր տրակտորների քանակը	4
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Բնակավայրի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	5
8. Բնակավայրի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	0
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	0
10. Ներբնակավայրային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	0

10.ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

	01.01.2025թ.
1. Բնակավայրում համայնքապետարանի աշխատողների թվաքանակը,	5
որից՝ 1.1 համայնքային ծառայողներ	1
2. Բնակավայրի բնակիչ ավագանու անդամների թվաքանակը	2

11. ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Հիմնախնդիրը (նկարագրությունը)	**Ակնկալվող լուծումը և լուծման ժամկետները**

Խմելու ջրի մշտական առկայություն	Խմելու ջրագծի արտաքին ցանցի վերակառուցում
Ներբնակավայրային ճանապարհների բարեկարգում	Սուբվենցիան ծրագրով